է վերստին ծննդեամբ մի նոր կեանք։ Այդ Փրկիչն ինքն է, որ իւր Հոգւոյ զօրութեամբ մարդկանց սրտերի դռներն է բաղխում և զղջումն ու հաւատ պարգևում, և ապա հաւատի միջոցով թողութիւն ու շնորհք տալիս հոգւով ծնուած իւր արքայութեան մէջ մտնելու։ Ուրեմն հաստատենք, որ նորից ծնուել կարելի է և որ պէտք է մենք անպատճառ ծնուենք։ Փրկչի ծննդեամբը մենք շնորհ ստացանք ու սուրբ Հոգին ընդունեցինք մասնակից լինելու երկնային այդ մեծ ուրախութեանը։ Այժմ մենք ուրիշ հարց տանք մեզ, արդեօք ծնուել ենք մենք Աստուծոյ հոգուց, որպէս զի դորանով յաւիտենական կեանքով ապրել կարողանանք։ Թող Աստուած ձեզ ոյժ ու կարողութիւն տայ, որ դուք ապաշխարութեամբ ու մաքրութեամբ, հաւատով ու զղջմամբ նորից ծնուել կարողանաք և իբրև նոր մարդ Աստուծոյ արքայութեան ժառանգ լինէք. ամէն.

Գերմ. թարգ. Ա. Վ. Ս.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ամսոյս 17-ին Նորին Սրբութիւն աղգիս Վեհափառ Հայրապետը մեկնեց Երևան և հետևեալ օրն այցելեց Ն. Կայսեր. Բարձրութիւն Գեներալ Նահանգապետ Գրինց Նապոլէոնին։ Տեսակցութիւնը տևեց ½ ժամ, որից յետոյ Գեներալ Նահանգապետն անմիջապէս այցելութեան եկաւ Նորին Սրբութեան։ Վեհափառին Երևան գնալիս ուղեկցում էին Դիւանապետ Յուսիկ վարդապետ, պ. Խորէն Խրիմեան։

Սուրբ Էջմիածին վերադարձան Երնջակի վանուց վանահայր Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանը և Դէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը։

Մայր Աթոռս վերադարձան Բարդուղիմէոս եպիսկոպոս, Արսէն, Մխիթար, Կոմիտաս, Իսահակ և Երուանդ վարդապետները։

Մայր Աթոռիս ագարակի կառավարիչ նշանակուեց Մողնու վանահայր Խորէն վարդապետը։

Ախալքալաքի գործակալութեան պաշտօնի համար առաջարկուեց Ուխտանէս վարդապետը։

Դպրոցական շինութեանց և գոյից ստացման համար Կովկասեան իշխանութեան հեռագրի համաձայն Վեհափառ Հայրապետը բարեհաճեց նշանակել Նահապետ եպիսկոպոս Նահապետեանին։

Սեպտեմբերի 12-ին Գանձակ քաղաքն այցելել է Նորին Կայսերական Մեծութեան Փոխարքայ պայծառափայլ կոմս Վարանցով-Դաշկովը։ Նորին պայծառափայլութիւնը գնացել է հայոց ս. Յովհաննէս եկեղեցին, որտեղ դիմաւորել է նրան փոխանորդ Կորիւն վարդապետը կարճ ատենաբանութեամբ թարգման հանդիսանալով այն զգացմունքների, որ հայ ժողովուրդն առհասարակ տածում է դէպի Փոխարքան։ Կոմսը գոհունակութեան հետ յայտ է յայտնել, որ հայ ժողովուրդը կը մնայ միշտ օրինապահ և կաշխատի պահպանել խաղաղութիւնը քաղաքում։

Մայր Աթոռիս հիւրատան հիւրընկալ և վանական կառավարութեան անդամ նշանակուեց տ. Սահակ վարդապետ Բաղդասարեանը։

Իւրեանց պաշտօնավայրերը վերադարձան Բաքուի և Նոր Բայազէտի գործակալ Զաւէն և Աչտակ վարդապետները։